

Լ Ա Ձ Ա Ր Ե Ա Ն

Հ Ե Մ Ա Ր Ա Ն Ա Ր Ե Ի Ե Լ Ե Ա Ն Լ Ե Ձ Ո Ի Ա Յ

ՅԱՄԻ 1861 — 1862.

Այս աղգային մեծանուն ձեմարանին այժմու բազմաՀմուտ եւ բարեւէր Վերատեսուչը Պարոն Նեպերով՝ մօտերս հրատարակեր է ձեմարանին տարեկան հաշիւները կամ տեղեկութիւնքը, յորոց կիմանամք նախ, որ ձեմարանին ներքին բարեկարգութեանը վրայ այժմ առաջունէն եւս աւելի ջանք եւ փոյթ կայ ընդհանրապէս. որով եւ յուսալի է թէ իւր բարերար հիմնադրաց ու պաշտպանող Տէրութեան նպատակներուն աւելի գիւրաւ հասնի: — Երկրորդ, կատեսուի որ 1862 տարւոյս հարցաքննութեան օրերը բոլոր աշակերտաց թիւն է եղեր 152. յորոց 102-ը հայ, 43-ը ռուսագաւան, 5-ը հռովմէական, եւ 2-ը լուտերական: Ուսումնական տարւոյն վերջը ձեմարանէն արձրկուեր են 6 աշակերտ. մընացեալները ըստ ուսումնական գաստկարգութեանց որոշուեր են այսպէս. լիկէոնի գասարանները մտեր են 8 աշակերտ, կիմ-

նաղիայի գասարանները 151, եւ նախակրթարանը 7:

Այս տարւուան հարցաքննութեանէն ետքը Բասսամեանց անունով աշակերտը գրուեր է ոսկի տախտակի վերայ, եւ ընդուներ է վրկայական արժանաւորութեան ոսկի մետալ առնելու: Լիկէոնի գասարանները մանող չորս աշակերտաց երկուքը հայաղգի են, այսինքն Տեր-Յակոբեան եւ Շանսղիգեան, որոց անուանք ոսկի տախտակին վրայ գրուեր են: Բաց յայնմանէ Պ. Տէր-Յակոբեանը ոսկի մետալ ընդուներ է իվարձ իւր շարագրած ճառին իվերայ Սրբոյն եղիշէի մատենագրութեանը:

Ամենայն աղգասէր Հայու պարտքն է այս բազմարդիւն ձեմարանին յառաջագիմութեանը վրայ տաք սրտով նայիլ, եւ յուսապատար խնդութեամբ ուրախակից լինել նորա բարերար եւ վեհանձն հոգաբարձուացն ու այժմու ջանասէր եւ քաջահմուտ կառավարչացը:

ԱՐԱՐԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ,

Ե Ի

ԸՆԳՈՒՆՈՂԱՅ ՇՆՈՐՀԱՍԼՈՒԹԻՒՆԸ.

Օրպաղարի անուանի վաճառական, եւ բոլոր նոր Ռուսիոյ աղգայնոց քաջածանօթն բարեպաշտութեամբ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱ ԱՐԱՊԵԱՆ, ուրիշ զանազան բարեգործութիւններէն զատ հաճեցաւ մէկ մէկ մեծամեծ զանգալի նուիրել Սիմֆերոպոլի եւ Խարասուի եկեղեցիներուն: Այս նուիրմանը համար Առաջնորդէն ուրախակցութեան նամակ ընդունելէն զատ, Սիմֆերոպոլի Ժողովրդէն ալ հետագայ շնորհակալութիւնն առաւ՝ փառաւոր ոսկեզօծ եւ զարդարուն սպաղարութեամբ: — Փափաքելի է որ աղգիս մէջ այսպէս հասարակաց օգտին նպատու յաջողութեամբ: — Փափաքելի է որ աղգիս մէջ այսպիսի ազէկութիւններ ճանչնալու եւ շնորհակալութիւն յայտնելու գեղեցիկ պատշաճաղութիւնը՝ սովորութիւն դառնայ մեր մէջ:

« Գերամեծսր Տեր Բիւսսամեան Գարուբին Արս Արաքեան եւ Գերամեծսր Տիրուհի Գայլանե Տիկին.

« Երախտապարտ համաղգիքս Ձեր բնակեալը իգաւառական քաղաքիս Տաւրիոյ իմ իմֆերոպոլ, տեսանելով զաղգասիրական եւ ըգբարեպաշտական նուիրատուութիւն Ձեր յանմուտայ յիշատակ արժանագով անուան Ձերոյ, զմեծաղին զանգալին (յիսունհաւերեք փութ եւ

լինն փունթ կշռով), զոր բարեհաճեցայք նուիրել Տաճարին Աստուծոյ յանուն Վերափոխման ՍՈՒՐԸ ԵՂԵՂԵՑԻՈՅ Հայոց քաղաքիս, պարտաւորիմք յայտնել զձերմեռանգն շնորհալութիւն մեր այսու թերթիւս գոհաբանութեան:

« Ճանաչելով քաջ զբարեպաշտական Ձեր հոգի, հաւատի եմք թէ որպէս այս՝ նոյնպէս եւ այլ անխնայ առատաձեռնեալք ի Ձէնջ